600.0222.24.06.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2020 թվականի № 222Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №469Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի հունիսի 3-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ձորագետ-4» փոքր հիդրոէլեկտրա-կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №469Ա՝

   1) որոշմամբ «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Ձորագետ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0529 լիցենզիայով ամրագրված

կառուցման ժամանակահատվածը երկարաձգել երկու տարի տասն ամսով՝ որոշման մեջ «մինչև 2020 թվականի հունիսի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2023 թվականի ապրիլի 25-ը» բառերով.

2) որոշման՝

ա. 1-ին կետում «Կաթնառատ համայնքի վարչական տարածքում» բառերը փոխարինել «Տաշիր համայնքի վարչական տարածքում (գյուղ Կաթնառատ)» բառերով.

բ. 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետում «Տավուշի» բառը փոխարինել «Լոռու» բառով:

2. «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0529 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ձորագետ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի №50-227 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի օգոստոսի 9-ի թիվ 652-8670 գրությամբ գործողության ժամկետը երկարաձգված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 7 375 000 (յոթ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարից 3 687 500 (երեք միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 7 375 000 (յոթ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2023 թվականի հունիսի 9-ը գործողության ժամկետով:

3. «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունիսի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
24 հունիսի 2020թ.